

ՀԱՅԻ ՄԵՆՔ

ԿՅԱՋ

ՀԱՄԱՐԹՈՂՈՔՍ ԽՈՇՀԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՈ
Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով սույն թվականի սեպտեմբերի 16—21 օրերին Մայր Աթոռում գումարվեց օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին մասնակցում էին՝

Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքության անունից՝ միտրոպոլիտ Էմիլիանոս Տիմիադիսը և Հելսինկի Ձոն միտրոպոլիտը:

Ռուս պրավունակ եկեղեցու անունից՝ Աստրախանի տ. Միքայել Եպիսկոպոս, պրոֆ. տ. Վիտալի Բորովյո ավագ քահանան և պրոֆ. Ալեքսի Օսիպովը.

Վրացական օրթոդոքս եկեղեցու անունից՝ Սովյումիի և Աբխազիայի տ. Խիա միտրոպոլիտը ու հայր Խարինը.

Բուլղար օրթոդոքս եկեղեցու անունից՝ տ. Նեստոր Վարդապետը.

Ռումին օրթոդոքս եկեղեցու անունից՝ տ. Անտոնի Պլամադեալա Եպիսկոպոս և պրոֆ. Դիմիտրո Պոպեսկոն.

Լեհաստանի օրթոդոքս եկեղեցու անունից՝ տ. Սիմոն Ռումանչով Վարդապետը.

Հունաստանի օրթոդոքս եկեղեցու անունից՝ պրոֆ. տ. Անաստասիոս Յաննուլասոս Եպիսկոպոս և պրոֆ. Էվանգելիո Թեոդորոսն.

Սլաքիայի օրթոդոքս եկեղեցու անունից՝ պրոֆ. Էմիլիան Չարնիչը.

Զեխուլովակիայի օրթոդոքս եկեղեցու անունից՝ դոցենտ տ. Պավել Ալեքսանդր ավագ քահանան.

Կիպրոսի օրթոդոքս եկեղեցու անունից՝ Դիոնիսիոս Կիլոտիս սարկավագը.

Եթովպական ուղղափառ եկեղեցու անունից՝ դոկտ. Գիրմա Վոլդեկիր-կոսը.

Սրբազն սիրիական օրթոդոքս եկեղեցու անունից՝ տ. Գևարգեզ Մար Օսթարիխու եպիսկոպոսը.

ԱՄՆ-ի օրթոդոքս եկեղեցու անունից՝ պրոֆ. Զոն Մեյենդորֆը:
Խորհրդակցությանը մասնակցում էր նաև հայ առաքելական եկեղեցու պատվիրակությունը՝ հետևյալ կազմով.

տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյան (Մայր Աթոռ և Էջմիածին).

տ. Շահն արքեպիսկոպոս Աճեմյան (Մայր Աթոռ և Էջմիածին).

տ. Արսեն եպիսկոպոս Բերքերյան (Մայր Աթոռ և Էջմիածին).

տ. Արամ վլրդ. Քեշիշյան (Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Անթիլիա).
տ. Զարեն վլրդ. Ազնավորյան (Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Անթիլիա).

Որպես խորհրդականներ սույն ժողովին մասնակցեցին նաև՝
պրոֆ. տ. Բորիս Բորբինսկովը (Ֆրանսիա).

տիկին Տոնովո Եվղովիմովը (Ժնև).

տ. Պոլ Ֆունտերը (Աստվածաշնչի միացյալ ընկերություն, Բելգիա).

Դանիել Մարտինսենը (Լութերական համաշխարհային ֆեդերա-
ցիա, Ժնև).

Պարգև Շահբազյանը (Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերություն-
ների բաժնի ընդի. քարտուղար, Էջմիածին):

Համաօրթոդոքս սույն խորհրդակցությանը մասնակցեցին նաև Եկեղեցի-
ների համաշխարհային խորհրդի կենտրոնի ղեկավար անձնակազմից՝
դոկտ. Էմիլիոն Կաստրոն («Համաշխարհային առաքելություն և պետա-
րանշություն» համանաժողովի տնօրեննելի)։

պրոֆ. տ. Իոն Բրիան (նույն համանաժողովի քարտուղար).

Վերապատվելի Ահարոն Սապօզյանը (ԵՀԽ-ի Աստվածաբանական կոր-
թության ֆոնդ)։

Ժ. Ժ. Բուվեյնը (ԵՀԽ-ի մամուլի ներկայացուցիչ):

ԺԱՄԱՆՈՒՄ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՈՒՄԱՎՈՐ ԲԱՑՈՒՄ ԽՈՐՀՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ


Սեպտեմբերի 16—17 օրերին արդեն Մայր Աթոռ էին ժամանել խոր-
հրդակցությանը մասնակցող բոլոր պատվիրակները:

Սեպտեմբերի 17-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, կա-
տարվեց խորհրդակցության հանդիսավոր բացումը Մայր տաճարում Էկո-
մենիկ աղոթքով: Բոլոր պատգամավորները ներկա եղան հայ Եկեղեցուն
հասուկ Սրբագալի ժամերգությանը, որը կատարվեց Մայր Աթոռի միաբան-
ների և հոգևոր ճեմարանի ուսանողների կողմից: Այնուհետև տեղի ունեցան
ոռուերեն, վրացերեն, հունարեն, ուսմիներեն, բուլղարերեն, անգլերեն և այլ
լեզուներով սուրբգրական դհոքեցումներ ու աղոթքներ:

Ժամը 10.30-ին պատվիրակությունը Մայր տաճարի գանգերի դողանչ-
ների ներքո առաջնորդվեց Վեհարան՝ ներկայանալու Հայոց Հայրապետին
և ստանալու Նրա օրինությունը:

Վեհարանի ընդունելության դահլիճում սույն խորհրդակցության նախա-
գահ տ. Շահն արքեպիսկոպոս Աճեմյանը Հայոց Հայրապետին ներկայացրեց
բոլոր պատվիրակներին:

ՀԱՅՈՒԹՈՒՆՆԱՌ ԽՈՐՀՈՒԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒՄ ՎԵՀԱՐԱՆՆԱՐ



Խորհրդակցության բացման հանդիսավոր սույն արարողությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովորությունը հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգսի Գասպարյանը:

Հանդիսավոր իրադրության մեջ և սրտագին մթնոլորտում Հայոց Հայրապետության շերտունեց խորհրդակցության բոլոր մասնակիցներին՝ բարիգալստյան և ողջույնի սիրալիր նետայալ խոսքով.

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
ՈՒՂԴՎԱԾ ՀԱՄԱՅՆԹՈՂՈՂՈՔՍ ԽՈՌՃՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

(1975 թ. սեպտեմբերի 17)

Սիրեցյալ եղբայրներ Մեր ի Քրիստո,

Հանուն Հայաստանյաց առաքելական եկեղեցվոր Մենք ուրախ ենք ողջունելու ձեզ և Էջմիածնի մեջ երշանիկ ասիթով մը: Դուք՝ Աերկայացուցիչներդ Արևելի օրթոդոքս եկեղեցիներու և Ժմանի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կերպոնի, հավաքված եք այստեղ՝ գրադարձու համար ձեր օրակարգի հարցերով, որոնք պիտի ուստմնահիրվին ու պարզաբանվին այստեղ ձեր աշխատանքներու ընթացքին, և ապա ձեռք բերված արդյունքներով մեր եկեղեցիները պիտի Աերկայանան շուտով նայորին հիմքերորդ համագումարին: Մենք կկարծենք, որ այս խորհրդակցության աշխատանքի արդյունքները քայլ մը դեպի առաջ պիտի տանին քրիստոնեական եկեղեցները, Նարդորին համաժողովի ընդհանուր նպատակներու իրագործման նախապարհի վրա: Կրկին անգամ բարի ժամանում կմաջենք ձեզի և Էջմիածնի ու նաև հաջողություններ ձեր աշխատանքներուն մեջ:

Նայորին համագումարի հիմնական թեման՝ «Քրիստոս կազատագրել և կիմիացնել», չափազանց նշանակալից և խորհմաստ կթվի Մեզ: Ազատագրել և միացնել. այս գաղափարներու զուգորդումը Մենք շատ այժմեական կգտնենք: Այն համոզումն ունինք, որ եկեղեցիները իրենց առաքելությունը հաջողությամբ կատարելու համար արդի աշխարհի մեջ, անհրաժեշտ է, որ առարկայուն դիտեն աշխարհի մեջ տեղի ունեցող բոլոր երևույթներն ու իրադարձությունները և հասկնան զանոնք, մանավանդ աշխարհի մը մեջ, որ անընդհատ խոր հեղաշրջումներու մեջ կգտնվի: Եվ ահավասիկ ազատագրում և միացում գաղափարները, այս իմաստով, այժմեականություն ունին նաև այսօրվա հեղաշրջման ընթացքի առնչությամբ: Օրինակի համար, նոյն այս գաղափարները ուրիշ ոգիով, այլ ճանապարհներով, իրագործել կձգտի ընկերվարական շարժումը աշխարհի մեջ: Համաձայն ընկերվարական ուսմունքի տևության և պրակսիսի, սարդը պետք է ազատագրել մարդու շահագործումնեն, իսկ արտադրության միջոցներու համայնացումով ալ պետք է ստեղծել հավաքական տեսություն: ուրեմն միատեղ աշխատանքի ճանապարհով՝ միավորում ազատագրված մարդոց: Ահավասիկ ընկերվարական մոտեցում մը ազատագրման և միացման գաղափարներու: Այստեղ հարց կծագի: Մենք, իբրև քրիստոնյաներ, որ կաշխատինք հատկել, կյանքի կոչել նոյն սկզբունքները քրիստոնեական տեսակետե, ի՞նչ հարաբերություն կարող ենք գտնել քրիստոնեական և ընկերվարական մոտեցումներու միջև ազատագրում և միացյուն գաղափարներու առնչությամբ: Արդյոք պետք է հակադրությունը ընկերվարական մոտեցումին, պետք

է անտեսե՞նք զայն բոլորովին, թե գուցե պետք է փնտրենք մոտեցման և հաշտեցման եղբեր: Անձնապես Մեր կարծիքով ուղիղ ճանապարհը այս երրորդ ճանապարհն է, որպեսզի Քրիստոսի պատգամը ավելի իրական ու արդյունավետ կերպով կարողանա կենսագործվիլ մեր օրերու և ապագա աշխարհի մեջ: Այս տեսակետեն մենք, իբրև քրիստոնյաներ, պետք է լավատես ըլլամբ, որովհետև Քրիստոսի եկեղեցին երկու հազար տարիներու հսկայական փորձ ունի այդ առնչությամբ: Այդ երկու հազար տարիներու ընթացքին Քրիստոսի եկեղեցին բազմաթիվ և բազմապիսի հեղաշրջումները մեջն անցած է և դիմագրաված բոլոր դժվարությունները: Մենք կարծու մեջն անցած է և դիմագրաված բոլոր դժվարությունները: Մենք կարծու մեջն անցած է և դիմագրաված բոլոր այլ այսի ըլլա: Հետևաբար լավատեսությամբ և մեր ուժեղությամբ վրա Վատոն՝ մոտենանք մեր օրերու աշխարհին, լավ հասկնանք բոլոր այս հեղաշրջումներու իմաստը և պատրաստվինք ապագայի համար, որպեսզի կարողանանք նոր պալմանեներու համաձայն եկեղեցին առաքելությունը շարունակել մարդկային կյանքի և պատմության մեջ: Այս ճանապարհի վրա մենք կարիք ունինք ամուր հավատքի, վճռական աշխատանքի և, ամեն բանե վեր, անսահման և անպայմանավոր սիրո անհատի բոլոր մարդոց համենավ:

Այս մի քանի խորհրդածություններով կրկին անգամ կմաղթենք ձեզի բարի ժամանում սուրբ Էջմիածին: Թող Աստված օրինեն ձեր աշխատանքները, թող Աստված օրինեն Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի առաքելությունը արդի աշխարհին մեջ: Ամեն:

Հանուն համաօրթոդոքս խորհրդակցության բոլոր ներկայացուցիչների շնորհակալության և երախտագիտության հետևյալ պատասխան խոսքով հանդես եկավ դոկտ. Էմիլիո Կաստրոն.

ԴՈԿՏՈՐ ԷՄԻԼԻՕ ԿԱՍՏՐՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

(1975 թ. սեպտեմբերի 17)

Ձերդ Սրբություն,

Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության կրոնական գործերի խորհրդի հարգելի պարոն նախագահ,

Սիրելի ներայաներ ի Քրիստոս,

Թույլ տվեք, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և այստեղ ներկա եղող մեր պատվիրակության անունից խորին շնորհակալություն հայտնեամ այն հյուրընկալության համար, որ ընծայեցիք մեզ: Թեև Մովկայի վրա կուտակված ամպերը տասներկու ժամով ուշացրին Եկեղեցիների որոշ ներկայացուցիչների ժամանումը այստեղ, սակայն Ձեր ընդունելության շերմությունը ամեն բան հաղեցրեց: Եկեղ ենք այստեղ համարյա աշխարհի շորս ծագերից և ներկայացնում ենք օրթոդոքս Եկեղեցիների մեծ ընտանիքի բոլոր ավանդությունները: Մեր մեջ ունենք նաև ավետարանական Եկեղեցիների մի փոքր ներկայացուցչություն՝ ավելի հարստացնելու համար այս հանդիպումը: Մեր Հանձնաժողովը, որն զրադկում է այս աշխարհում կատարվող քրիստոնեական սուրբելությամբ, հատուկ ուշադրություն է ցուցաբերում օրթոդոքս Եկեղեցիների նկատմամբ, որովհետև մենք գիտենք, որ ձեր Եկեղեցիները առաքելական գործունեության երկարամյա փորձառություն ունեն, և այդ փորձառությունը երբ միանա ընդհանուր Եկեղեցու փոր-

ձառությանը, կարող է կարևոր մի պատճ և հարատացում ապահովել Եկեղեցների համաշխարհային խորհրդին: Այդ դարավոր փորձառությունը, սակայն, բավական կղզիացած և առանձնացած է այսօր և անհրաժեշտ է, որ այն առաջ քերպի ուշադրությամբ:

Չափ ուրախ ենք, որ այս հանդիպումը տեղի է ունենում Հայաստանի հողի վրա, սուրբ Էջմիածնում: Բայց անհրաժեշտ եղավ քանի հինգ տարի, մինչև որ այս իրողությունը կյանքի կոչվեց: Հույս ունենք այս մի քանի օրերի ընթացքում պեղել ձեր եկեղեցու հարուստ անցյալը՝ Սատծուն ավելի լավ ծառայելու կերպեր գտնելու համար:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջոցով մենք պարտականություն ենք ստանձնել պալքարելու աշխարհում արդարության և խաղաղության սուրբ գործի համար: Եթե այսօր Աքրիկայում բազմաթիվ երկրներ ձեռք են բերել անկախություն, այդ գործում քիչ օգնություն չցուցաբերեց քրիստոնեական եկեղեցիների այս մեծ ընտանիքը:

Զերդ Սրբությունը քիչ առաջ ամենայն կարևորությամբ անդրադարձավ աշխարհի այսօրվա հարցերին մոտենալու անհրաժեշտության մասին: Դրանք մեր սրտին շատ մոտ հարցեր են: Այսօր աշխարհում անհրաժեշտ պահանջ են արդարությունը և ազատագրությունը: Եվ շատ նշանակալից է, որ այս շրջանում մենք հավաքվել ենք այստեղ մեր արարողության և ծեսի նշանակությունը խորացնելու համար: Մեր կազմակերպության գործունեության ծրագրի հիմնական մասն է կազմում անշված ժողովուրդների ազատագրումը և պալքարը: Մենք ցանկանում ենք որոնել ու տեսնել, թե ի՞նչ կապեր կարելի է հաստատել մարդկային այդ գայումի և մեր արարողական ու պաշտօամունքային կյանքի միջև: Աստված իր միածին Որդուն ուղարկեց մարդկանց փրկության համար: Մենք էլ նույն գգացումով պետք է մեզ առաքենք ի ծառայություն մեր մերձավորի և մեր նամանի: Ինչպես կարող ենք արտահայտել մեր այդ առաքելական գգացումը և պարտավորությունը պաշտամունքային կյանքի մեջ: Ինչպես կարող ենք հետաքրքրել այսօրվա մարդկությունը, որ Հիսուս Քրիստոսի մեջ կարողանա տեսնել ազատարար մի ուժ: Հաճախ մեր եկեղեցիները եղել են հիվանդանոցներ հոգևոր հիվանդների համար, կամ նույնիսկ շտեմարաններ՝ մեր շահածը պահելու համար: Մենք հաճախ մոռանում ենք, որ եկեղեցու իրական կյանքը այն սեռունդն է, որ եկեղեցին պետք է տանի ամրող աշխարհին՝ սնելու և կենացացնելու համար այն:

Մենք եկել ենք այստեղ միմյանց հանդիպելու, բախվելու, միմյանց ներշրջնելու, մեր անցյալի փորձառությունները քննարկելու և ապագային հայելու լավագոյն մի հայացքով: Եկել ենք ընկերային տարրեր սիատեսները ունեցող երկրներից: Մեր եկեղեցիներն ապրում են ընկերային տարրեր պայմաններում, և մենք հավաքվել ենք այստեղ, իրար մոտ՝ տեսնելու, թե մեր եկեղեցիներն ինչպես կարող են զանազան և տարրեր միջոցներով իրենց մասնակցությունը բերել զանազան երկրամասերի քրիստոնեական կյանքին:

Զերդ Սրբություն, Դուք հիշեցիք, որ ապրում եք ընկերվարական սիստեմի մեջ: Մենք ծարավն ունենք գիտենալու, թե ինչպես ընկերվարական վարչաձևի տակ ձեր եկեղեցին կարող է շարունակել և շարունակում է իր առաքելությունը քրիստոնեական ամրողական ոգով: Ես գալիս եմ Հարավային Ամերիկայից, որ մարքսիստական գաղափարաբանության և քրիստոնեական հավատի համակեցությունը ամենակենսական հարցն է: Հարավային Ամերիկայում՝ Ուրուգվայում կամ Արգենտինայում, ապրում են հայեր,

որոնք խորապես քրիստոնյա են, բայց ոմանք միաժամանակ մարքսիստական գաղափարաքանությամբ տոգորված շատ գործունյա մարդիկ: Հարցը մեզ համար կայանում է ոչ թե քրիստոնեությունը հակադրելու ընկերապին որևէ դրույթյան, այլ քրիստոնեական առաքելությունը՝ շարունակելու ամեն տեղ աշխարհի վրա: Մենք հույս ունենք, որ ձեր եկեղեցու ավանդության հարստությունը և պատմական փորձառությունը պիտի օգնեն մեզ՝ ավելի հատակ պատկերացնելու մեր առջև դրված հարցերը մեր այս հանդիպման ժամանակ:

Ձեր Սրբություն, ցանկանում ենք ներկայացնել Ձեզ մեր հանդիպման նախապատրաստական աշխատանքների արդյունքը: Սա բնականարար այն չէ, ինչ այստեղ մեր խորհրդակցությունից հետո պիտի ներկայացվի Ձեզ: Հույս ունենք, որ մեր աշխատանքների ավարտին, շարաթվա վերջում, կրկին պիտի գանք Ձեզ մոտ՝ հաղորդելու, թե ահա այս է համեստ պտուղը մեր ժողովի:

Ինչպես գիտեք, քրիստոնեական եկեղեցիները սիրում են Պատմություն և Ավանդություն: Այս աղիթով ահա Ձերդ Սրբությանն ենք ներկայացնում Պատմության և Ավանդության հարցերի շուրջ գրված դոկտ. Վիսերթ Հովֆեի՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաջին քարտուղարի հուշերի գիրքը, որի հիման վրա ել սկսում ենք մեր ուսումնասիրական աշխատանքները լավագույն մի ապագայի հեռանկարով:

Ն Ի Ս Ա

Ժամերի փոխանակություն հետո հարգարժան պատվիրակները առաջնորդվեցին Վեհարանի երկրորդ հարկի դահլիճ, որ տեղի ունեցան ժողովի հիստերը:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը մուտք գործեց հիստերի դահլիճ՝ շրջապատված հայ եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչներով և Մայր Աթոռի միաբաններով:

Համաօրյուղուրք եկեղեցիների սույն խորհրդակցության առաջին հիստը բացվեց Հայոց Հայրապետի աղոթքով և օրինությամբ:


Սույն հիստի հանդիպակար բացումից հետո Հայոց Հայրապետը դահլիճից հեռացավ՝ լիակատար հաջողություն մաղթելով խորհրդակցության աշխատանքներին:

Ժողովի նախագահ տ. Շահե արք. Ամենյանը մեկ առ մեկ ժողովին ներկայացրեց անուններն ու հանգամանքները բոլոր պատգամավորների: Այնուհետև նախագահող սրբազնը, հանուն Հայոց Հայրապետի, կրկին բարի գալուստ մաղթեց բոլոր պատգամավորներին և ողջունեց նրանց ներկայությունը հայ եկեղեցու պատմական կենտրոն Մայր Աթոռ և Էջմիածնում և աստվածաշնչական Արարատյան աշխարհում:

Սապա խորհրդակցությունն անցավ իր աշխատանքներին:

Սույն խորհրդակցության գլխավոր թեման էր՝ Խոստովանել Քրիստոսին այսօր եկեղեցու ծիսական կյանքի միջոցով:

Ներածական խոսքով առաջինը ելույթ ունեցավ ԵՀԽ-ի ներկայացուցիչ տ. Իոն Բիբիան: Նա նշեց, որ ներկա խորհրդակցության բնարանը ներշնչված է 1974 թվականի հունիսին Բոխարեստում կայացած խորհրդակցության աշխատանքային Գ խմբում քննարկված հարցից, խորհրդակցություն, որը նվիրված էր սուրբ պատարագի խորհրդակցությունն ու նաև նույնագույն պատարագի առաջնաշնորհությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՉՈՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԻՄՈՒՄՆԵՐԻ ՄԻ ՊԱՀ. ԱԱԿԻԿՈՎ՝ Տ. ՇԱՀՆԱԶԱՐ Ա. ԱԳՐԵԼ. ԱՃԵՐԱԿԱ

նշանակությանը: Հարգելի պրոֆեսորը շեշտեց, որ սովոր խորհրդակցությունը քննության պետք է առնի վերոհիշյալ բնաբանը նիմնականում երեք երեսներով.

Ա. Վկալություն և պաշտամունք.

Բ. Ավետարանի քարոզությունը պաշտամունքի միջոցով.

Գ. Պաշտամունք և ոգեկանություն:

Պրոֆ. Խոն Բրիան իր ներածական խոսքը նորափակեց՝ շեշտելով, որ այստեղ են հավաքվել տարրեր ծիսական ավանդություններ ունեցող օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչներ՝ արտահայտելու համար այսօր իրենց եկեղեցիների ծիսական կյանքի վկայության խորունկ իմաստը: Այս խորհրդակցությունում մեր հույսն է,— նշեց պրոֆեսորը,— այս ծիսական շրջանակի մեջ միան հետազոտել Ավետարանի ներուժ հնարավորությունները և սեղմ ալբյուրները: Այսօր եկեղեցու առաքելական գործը շատ բարդ և հրատապ հարց է: Խոնարհության ոգով մենք պետք է աշխատենք տեսնել, թե ի՞նչ տեղ է գրավում պաշտամունքը Հարության ազատարար պատգամը ժողովրդին հաղորդելու գործում, որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեն: Վաղվա եկեղեցու պատկերը հավանաբար կախում պիտի ունենա այն բանից, թե մենք ինչպես ենք մեկնաբանում և ապրում «հոգով և ճշմարտությամբ կատարված պաշտամունքը» ներկա ժամանակում:

Այնուհետև ֆրանսերեն լեզվով հետևյալ ընդարձակ և բովանդակալից զեկուցումով հանդես եկավ հայ եկեղեցու ներկայացուցիչ տ. Շահե արքայիսկոպոս՝ «Խոստովանել Քրիստոսի այսօր եկեղեցու ծիսական կյանքի միջոցով» նիմնական թեմայի շորջ:

Տ. ԾԱՀԵ ԱՐՔԵՊ. ԱՃԵՄՅԱՆԻ ԽՈՍՔԸ

(1975 թ. սեպտեմբերի 17)

Թույլ տվեք, սիրելի բարեկամներ, որ հավաքվել եք այստեղ քննարկելու համար այսօրվա ծիսական կյանքի «խոստովանություն» երեսը, այս զեկուցումն սկսել՝ ոգեկոչելով ծիսական կյանքի մի գեղեցիկ օրինակ աշխարհի այս մասի անցյալից, որ տեղի է ունենում այս պատկառելի ժողովը:

Արագած լեռան լանջերին գոյություն ունեն տարրեր դարաշրջաններից մնացած մի շարք վանքեր, որոնցից ամենաբարձրադիրը գտնվում է գրեթե լեռան կատարին, իսկ վերջինը՝ Էջմիածնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Այսօր բոլորն էլ կիսավեր վիճակում են: Պատմությունն ասում է, որ ամեն առավոտ, գիշերվա վերջին, դրանցից լեռան գագաթին ամենից ավելի մոտ գտնվող մենաստանը՝ Սաղմոսավանքը, ուժգին կերպով հնչեցնում էր իր զանգերը՝ արթնացնելու համար մյուս վանքերի վանականներին, որպեսզի բոլորը պատրաստվեն ողջունելու լուսաբացը սաղմոսերգությամբ: Արշալուսին երկրորդ մենաստանը՝ Հովհաննավանքը, իր զանգերի դողանչով ավետում էր Հայր Աստծուն մատուցված ժամերգության սկիզբը: Երրորդը՝ Կարմրավոր սուրբ Աստվածածինը, երբ արեգակը հայտնվում էր սարի կատարին, արձագանքում էր այդ դողանչին՝ ավետելով Աստծո Որդուն մատուցված առավոտյան ժամերգության սկիզբը: Չորրորդ մենաստանը՝ Ծովակաթը, հնչեցնում էր իր զանգերը սուրբ Հոգուն մատուցված երրորդ ժամի ժամասացության սկիզբին: Եվ անա զանգերի վերջին դողանչը, տա-

րածվելով Հջմիածնի Մայր տաճարից, լցնում էր Արարատյան հովիտը՝ ավետելու համար պատարագի սկիզբը:

Առանձին մի կարոտով է, որ ոգեկոչում ենք զանգերի այս երգը, որն արթնացնում էր քրիստոնյան Հայաստան աշխարհը առավոտյան աղոթքի համար՝ լուսաբացից սկսած ողեղեցելով օրվան և նույնանալով լուսին՝ գույերգելու համար Արարչի փառքը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ զանգակատները, երկնալաց գեղեցիկ գմբեթները և եկեղեցիների քարերը երգում էին. «Առաօսու օրինութեանցն և փառաբանութեանցն արժանի արագամենան հայատացեալս անուան քում սրբոյ»:

Սյրպիսին էր հավատացյալների գերագույն իղձը: Առավոտյան նրանց առաջին գործն էր լինում երգել Աստուծո անվան փառքը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ոչ մի արիստավոր, ոչ մի գյուղացի աշխատանքի չեր գնում առանց եկեղեցի նունելո՞ւ այնտեղ մի մոմ, մի շիթ լուս ավելի վառելու համար: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ մարդու կյանքի յուրաքանչյոր օրը իր կշռովով ստանում էր տոնացուցի տոներով ու արարողություններով, ծոմապահություններով ու ինքնախարազանութերով, երբ յուրաքանչյոր առավոտը, մի սրբի կամ Քրիստոսի կյանքի մի դրվագի հիշատակումով, Աստծոն նվիրված մի օրվա ավետիսն էր տալիս: Ամեն եղանակ իր տոներն ուներ և ամեն ժամ՝ իր աղոթքը: Մարդն ապրում էր բնույթյան ոիթուով և արևածագից սկսած մինչև մայրամուտ մասնակից էր լինում բնույթյանը՝ փառաբանելու համար իր Արարչին: Աստղերի և նրանց շարժման, երկրի և նրա եղանակների մեջ նա տեսնում էր աստվածային ուժի մի պանծացում, բնույթյան կողմից կատարվող մի պաշտամունք, որին հետևիում էր իր պաշտամունքը՝ եկեղեցու պաշտամունքը, որ ամբողջացնում էր այն՝ սրբազն լեռան դիմաց կանգնեցնելով Մայր տաճարը, ամեն աղբյուրի կողքին՝ մի վանք—ակնաղբյուր իր կրոնական կյանքի—և յուրաքանչյոր սրբի հշարհների վրա՝ մի եկեղեցի: Եվ ամեն ինչ խաչի հշան էր կրում իր վրա, որովհետև ամեն ինչ Աստծոն էր մատուցվում տիեզերական մի պատարագով:

Դա խոր արմատներ ունեցող մի եկեղեցու ծիսական կյանքն էր քրիստոնյա դարձած մի երկրում, որ հավատացյալ ժողովուրդը հոչակում էր Քրիստոսի անունը ու այն հոչակել էր տալիս բնույթյանը, որի մեջ և ապրում էր ինը:

Ի՞նչ պատահեց, որ վանքերը դառնան ավերակներ, որ օրերն ու ժամերը կորցնեն իրենց ծիսական իմաստը, որ մարդու առավոտյան զարթոնքը դադարի փառահետ մի արևածագ լինելուց, պանծայի մի հաղթերգ՝ խավարի դեմ, լուսի գովաբանություն, այն լուսի, որը լուսավորում է նրա ամբողջ ներքին էռույթունը:

Ողբափառ եկեղեցու ծեսը՝ ամենից գեղեցիկը, ամենից ամբողջականն ու ճշմարիտը, աստիճանաբար նեղանալով, ամփոփվեց եկեղեցու պատերի, վանքերի առանձնության մեջ՝ դառնալու համար մի օրացուց, որը կարգավորում է այլևս ոչ թե ամբողջ ժերմեռանդությունը, բոլոր հավատացյալների կրոնական կյանքը, այլ այն մի խումբ հոգևոր պաշտոնյաների երգերն ու աղոթքները, որոնք դեռևս հաճախում են եկեղեցին:

Անս թե ինչո՞ւ երբ ինձ առաջարիկեց այս զեկուցման թեման, ևս ինձ նարց տվեցի. «Ի՞նչ է այսօրվա ծիսական կյանքի արտահայտությունը. ի՞նչ է հշանակում խոստվածել Քրիստոսին այդ ծիսական կյանքի միջոցով»:

Ծիսական կյանքով ապրել, նշանակում է, աստվածային շնորհով լցված և եկեղեցիով առաջնորդված, դառնալ կենանի արվեստի մի գործ Աստուծո առաջ՝ չունենալով այլ նպատակ, քան լինել և ապրել Աստուծո ներկայությամբ: Նշանակում է կատարել Տիրոջ խոսքը և «դառնալ մանուկներ»: Նշանակում է մեկընդմիշտ հրաժարվել չափահաս տարիքի կեղծ իմաստությունից, որ ամեն ինչում ուզում է միշտ մի նպատակ տեսնել: Նշանակում է համարձակություն ունենալ պարելու, ինչպես անում էր Դավիթը, երբ պարում էր Ուխտի տապանակի առաջ՝ անկանած վտանգելով իրեն այդ սրբազն պարով, որ այս աշխարհի իմաստուն և խոնմ մարդիկ չեն ճանաչում ու զվարճանապու հեգնում են այն իրենց ծանր լրջության մեջ կորցրած լինելով ոգու ազատությունն ու երիտասարդությունը: Դավիթը նոյնպես ատիպիկ եղավ տանել Մեղրողի ծաղրը:

Ապրել ծիսական կյանքով, նշանակում է սպառել իր ժամանակը ի ծառայություն Աստուծո: Նշանակում է, Աստուծո աչքերի առաջ, գեղեցկության, ազատության և սուրբ ցնծության մեջ, շարունակել այն պարը, որ Աստված ինքն է տնօրինել:

Ի վերջո ուրիշ ի՞նչ կարող է լինել հավիտնենությունը, քան այդ պարի կատարյալ իրականացումը: Մեր ճակատագրի երկնային կատարումն էլ «հավիտնենական մի օրիներգություն» չէ՝ միևնույն երկրի վրա այդ «հավիտնենական օրիներգություն»-ը՝ ծեսը, արտահայտությունը չէ՝ արդյոք «Աստուծո բագավորության», որ մարդու Որդին եկավ հաստատելու մարդկանց մեջ երկնքի բագավորության պատկերի համաձայն: Իր սկզբնավորությունից իսկ եկեղեցին իր բոլոր ժամասացությունները կատարել է հատակ նպատակ ունենալով երկրի վրա ստեղծելու այն սրբազն միջավայրը, որ սրբացածների երգը չի դադարում դեպի երկինք բարձրանալոց՝ ամբողջացնելու համար Աստուծո շորջ բոլորված հրեշտակների երգը: Պատարագի սկզբին բահանան մինչև այսօր էլ այս ցանկությունն է հայտնում ասեղով. «Ի յարկի բում սրբութեան և ի տեղուց փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս և մարդկան քայարանիս, առաջի աստուածենիալ և պայծառացեալ սուրբ նշանաց և սուրբ սեղանոյ խոնարինալ երկիրի երկիրագանեմբ. զուրբ և զիրաշալի զՏէրութիւնի քո օրինեմք և փառատրեմք. և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրինութիւնն և զփառ ընդ Հօր և ընդ Հոգուոյ սրբոյ...»:

Իր ծագումից սկսած, դարեր ամբողջ, այսօր և այնքան ժամանակ, որ եկեղեցին գոյություն ունենա, նրա հասարակաց աղոթքը պիտի շարունակի խոսել հրեշտակների լեզվով. «Փառք ի բարձուն Աստուծոյ...»: Եվ այդ անեղով՝ նա պիտի մնա որպես հավատի փառավոր, չդադարող մի խոստվանություն, որ նա պիտի արտահայտի ծիսական մեծարանքով:

Աստուծու ուղղված մեծարանքի իր առաջին արարքով, եկեղեցին այլ կերպ չի կարող արտահայտվել, քան ծիսականորեն: Արդ, յորաքանչյոր ժողովրդի, յորաքանչյոր ազգի, յորաքանչյոր երկրի մեջ, որ զարգացել է այդ անհրաժեշտությունը, ծեսն ստացել է զանազան ձևեր, ոճեր, արվեստի այնպիսի մի արտահայտություն և հնչելություն, որ համապատասխանում է բրիստոնյա դարձած ժողովրդի խոր զգայնությանը:

Յորաքանչյոր քրիստոնյա համայնք, դուրս գալով գետնադամբանեներից, նախ կազմակերպել է իր «սրբազն միջավայրը», իր աղոթատեղին այնտեղ կատարելու համար իր ծեսը: Եվ սրբատեղին գետնից վեր է խորցել հաղթականորեն, այնպիսի մի ճարտարապետությամբ, որ հասովի է

եղել այն երկրին, որը կառուցել է այն՝ ամենուրեք սակայն արտահայտելով միևնույն մտահոգությունը մեր այս աշխարհը դրոշմելու փրկարար խաչի նշանով և իր գագաթին կրելու նոյն պաշտպանող խաչը:

Դա ցավագին անհրաժեշտությունն է բացվել տեսչացող ամեն ներաշխարհի: Արդ, առաջին դարերի մարտիրոս եկեղեցու համար, որ վերջապես ձեռք էր բերել արտահայտվելու իր ազատությունը, ներքին մի անհրաժեշտություն եղավ պողոթկալ իր հավատի խոստովանությունը ծիսական կյանքով սրբատեղիի մեջ և սրբատեղիի շուրջ: Սրբատեղին դարձավ ծեսի ամբողջացուցիչ մասը՝ վերածելով քարը աղոյքի պողոթկումի, հավատի արտահայտության, Քրիստոսի կյանքի հավիտենական վկայությամբ: Նրա ներքնամար ձգտեց լինել «Երկինք երկրի վրա», «քննակավայր Հավիտենականի», «Սրբություն Սրբոց», սրբացած վայրը ներկայությամբ նրա, ով խոստացավ, ասելով. «Չի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, աև եմ ես ի մէջ նոցա»:

Այստեղ կանգ առնենք մի պահ՝ վերադառնալու համար մեզ գրադեցնող երկու հարցերին. դրանք են՝ այսօրվա ծիսական կյանքը և խոստվանել Քրիստոսին այդ կյանքի միջոցով:

Եթե ծիսական կյանքը սկզբում էապես եղել է եկեղեցու հասարակաց մեծարանքն ու գոհարանությունը՝ ուղղված Հայր Աստծուն, որն այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ ուղարկեց իր միածին Որդուն, որն իր արյունը տվեց մեր մեղքերի համար, ուղղված նաև սուրբ Հոգուն՝ մեր հավատի հավիտենական ու կենդանարար Ծնչին,—և եթե սրբատեղին, որ գերազանցապես հավատի կոթողն է և աղոյքի վայր, շարունակում է մինչև այսօր համախմբել հավատացյալ ժողովրդին ծիսակատարության համար, հարցն այլև ծիսական կյանքն արդարացնելու մեջ չի կայանում, այլ ուսումնասիրելու նրա իմաստը, նրա արտահայտության ձևերն ու ներգործությունը, մանաւանդ երբ նկատի ունենանք ծեսն այնպես, ինչպես քրիստոնեական դպրավոր կյանքն է զարգացրել այն իր գեղեցկությամբ ու արտահայտչական ուժով, հատկապես Սրնելքում:

Հաճույքով է, որ հիշատակում ենք այստեղ Վատիկանի Բ ժողովի կողմից ձևակերպված հատվածն այդ մասին. «Յուրաքանչյուր ոք գիտի, թե ինչպիսի առանձնահատուկ սիրով են կատարում արևելքից քրիստոնյաները սրբազն ծեսը, մանավանդ պատարագի խորհուրդը, որ կյանքի աղբյուր է: Եկեղեցու համար և երաշխիք՝ երկնային փառքի: Դրանով է, որ հավատացյալները, եականուպոսին միացած, մոտենում են Հայր Աստծուն Որդու միջոցով, —որ մարմնացյալ Բանն է, մեռած և փառավորված, —սուրբ Հոգու հեղմամբ: Սյրահիսով նրանք հաղորդությամ մեջ են մտնում ամենասուրբ Երրորդության հետ և դառնում «հաղորդակիցները աստվածային բնության» (Ա. Պետրոս Ա, 4): Այսպես, որեմն, յուրաքանչյուր առանձին եկեղեցում Տիրոջ պատարագի խորհրդի մատուցմամբ կառուցվում ու մեծանում է Աստոծու եկեղեցին, և առանձին եկեղեցների միջև հաղորդությունն արտահայտվում է համընդհանուր մատուցմամբ»:

Ընդգծում եմ «մանավանդ պատարագի խորհուրդը» բառերը, որովհետև պատարագի խորհրդով եկեղեցին աշխարհի առջև Քրիստոսին խոստվանելու արարքից առաջ է անցնում նոյնանալու համար Քրիստոսին, ապրելու նրա մեջ, դառնալու նրա սուրբ Մարտիրոս: Որովհետև քրիստոնեական պատամունք էապես Հիսուս Քրիստոսի՝ Աստոծու և մարդու, մեր Փրկչի կողմից կատարված մի պաշտամունք է: Դա վճռական նշանակություն ունեցող

մի իրողություն է, որը, քրիստոնեական հետանկարի վրա, արմատապես փոխակերպում է մարդու կրոնական կեցվածքի ներքին տվյալները։ Աստուծո մարդեղությունը այն գլխավոր եղելությունն է, որը որոշում է քրիստոնեական պաշտամունքի առանձնահատկությունը։ Քրիստոսի ներկայությունը հաւորդական հացի և գինու կերպարանքի մեջ, Քրիստոսի ներկայությունը նկեղեցու քարոզված իր կենդանի խոսքով,—ահա եռյակ ներկայությունն, որը, ավելի քան Քրիստոսին խոստվանելը, երաշխավորում է նրա իրականությունը։

Ներկայության այս բոլոր եղանակներից, որ թվարկվեցին, ամենց ավելի հացի և գինու կերպարանքի մեջ արտահայտված Քրիստոսի ներկայությունն է, որ հասնում է իրականության ամենաբարձր աստիճանին։ Դա, անհասկած, խորհրդանշական ներկայություն է, քանի որ արտահայտվում է հացի և գինու խորհրդանշական միջով, քայլ դրանով նվազ իրական և գոյացական մի ներկայություն չէ։

Սուրբ պատարագի մատուցման արարուվ, պատարագո՞ն քահանայի և ոչ թե սրբագործված տարրերի մեջ է, որ Քրիստոս ներկա է դառնում որպես քահանա իր պատարագի։ Այստեղ Քրիստոսի ներկայությունը իրական և գոյացական չէ, ինչպես հաղորդական հացի և գինու կերպարանքի մեջ, այլ խորհրդանշական և պաշտոնակատարական։ Պատարագիշը, որպես այդպիսին, Քրիստոսին է ներկայացնում, Քրիստոսի դերն է կատարում։ Նա պատարագ է մատուցում, պաշտամունք կատարում Քրիստոսի անոնցից, Քրիստոսի փոխարեն։

Ոմանք մեղադրում են ծեսերը՝ առարկելով, որ դրանք հետացել են իրենց ժողովրդական ծագումից և վերածվել մեքենական ազդեցություն գործող գրեթե մոգական տարազների, որոնք արտասանվում են անհասկանալի դարձած մի լեզվով, և որոնց ամբողջ ազդեցությունը կայանում է միայն իրենց խորհրդավորության և անցյալի հրապուրի մեջ։ Ուրիշներ դրանք համարում են շատ գաղտնախորհուրդ՝ իրենց ներքին հշանակությամբ, որովհետև Արեւելքի եկեղեցներից յուրաքանչյուրն ունի մի ամբողջական ծես՝ իր լեզվով, երգերով և պաշտամունքային առանձնահատուկ հորինվածքով, որոնք ստեղծվել են բայց այն ժողովրդի ճաշակի ու խառնվածքի, որին նա ծառայում է։ Երբեմն այն եկեղեցներից մի քամիսի մեջ ծեսը հասել է իր զարգացման գագաթնակետին ժողովրդի որոշ ծաղկուն մի ժամանակաշրջանուն և քարացած մնացել է մի ձևի մեջ, որը համարվել է կատարյալ, մինչդեռ այդ ժողովրդի լեզուն, սովորութները, կյանքի պայմանները և ամբողջ քաղաքակրթությունը բարեշրջում են ապրել։

Երրորդ մեղադրանքն այն է, որ այն ծեսը, որ մենք փորձեցինք ներկայացնել որպես «օրիներգություն», առավոտյան և երեկոյան ժամանացություն, մասնավոր որպես սուրբ պատարագ, իր պատգամը բերում է միայն մասնավոր մի եկեղեցու հավատացյալներին՝ իր խոստվանական առաքելությունը կատարելով միայն տվյալ եկեղեցու հենց ներսում։ մեկ խոսքով՝ այն չունի արտաքին ճառագայթում։ Պետք է քո եկեղեցուն պատկանած լինես, որպեսզի նրա պաշտամունքը քեզ գրավի ու ներքաշի իր ոգեկանության մեջ։

Այս երեք մեղադրանքները կարող են ամփոփվել միակ մի մեղադրանքի մեջ. այն, որ ծեսը, այսօրվա իր ծիսարանով, ենթակա է ներկայի հետ իր կապը խօելու վտանգին։

Կարծում ենք, որ այս թեմատությունը չափավանցիած է: և բխում է: մանավանդ ծեսի բան իսկ էությունն ըմբռնելու մի խոր անհնակացողությունից:

Փաստ է, որ այս երկրներում, ուր ծեսը հավատի հասարակաց միակ արտահայտությունն է եղել, հավատացյալները դարձել են հետզինուն ավելի պահպանդական և ավանդապաշտ՝ չհանդորժելով ժամագրքերի մեջ որևէ փոփոխության, մինչև իսկ պաշտպանելով հին լեզվի պահպանումը և առաջ բաշելով ավանդությունը անապարտ պահելու սկզբունքը: Այդպիսիների համար ծեսը նույնանում է իրենց կրոնի՝ իրենց հոգևոր կյանքի այդ կենդանի գանձարանի ճշմարտության և գեղեցկության հետ: Ասում են, որ մի օր, երբ հանգույցալ Ալեքսի Պատրիարքին հարցրել են, թե ինչպես կահմանի ուսու եկեղեցին, Նորին Ամենապատվությունը պատասխանել է: «Ծուս եկեղեցին այն եկեղեցին է, որը մատուցում է աստվածային ծեսը»: Եվ դա նրա համար, որ ծեսը, մանավանդ ազգային եկեղեցիներում, սևում է ժողովրդական արվատից՝ դառնալու համար նրանց հավատի գեղագիտական արտահայտությունը: Արվեստի նպատակը ինքն իր մեջ է: Ենթարկվելով օգտապաշտության՝ ևս մահանում է: Արվեստի գործը օգտապաշտություն չի ճամաշում երբեք և ոչ էլ՝ գործնական նպատակ, այլ նրա իմաստը իր լինելու փաստի մեջ է: Նրա մեջ իրերի էությունը և արվեստագետի հոգու ու մարդկային հոգու ներքին կյանքը արտացոլվում են ամենաշեշտ և բյուրեղացած մի ձևի մեջ: Նա բավարարվում է լինելով Ծխմարտի գեղեցիկ ցոլքը «splendor veritatis»:

Այդ գերագույն Ծխմարտությունը, որի պայծառ ցոլքը ծեսն է, ինքը Քրիստոն է: Ամեն ծես, արևելյան թե արևմտյան, հյուսված է վարդապետություններով կամ, ավելի ճիշտ, այնպիսի տարազներով, որոնք արտահայտում են ամենահիմնական ճշմարտությունները քրիստոնեական հավատի, որի կենտրոնը միշտ Քրիստոն է:

Ծեսը ազատագրող Ծխմարտության արտահայտությունն է ամենաշեշտ մի ձևի բխած այն ժողովողի հոգուց, որն ստեղծել է այն որպես հասարակաց աղոթքի իր լեզուն: Անա թե ինչու նա իր մեջ կրում է խաղաղության վեհագույն մի առաջինություն:

Եթե այսօր ծեսի որոշ ձևեր կարիք ունեն որոշ բարեփոխությունների ենթարկվելու, դա ոչ թե նրա համար է, որ ծեսը հետանա իր առաքելությունից կամ իր սկզբնական բնույթից, այլ նրա համար, որ այն դառնա այսօրվա հավատի առավել անեղեղ և առավել անմիջական արտահայտությունը: Ինչպես որ եկեղեցիների ճարտարապետությունը նորանոր ձևերի մեջ է դրսուրվում առանց աղարտելու սակայն սրբատեղիի հիմնական գաղափարն ու կոչումը, ծեսը նույնպես գուցե կգտնի արտահայտության նոր ձևեր՝ առանց հետանալու ինքն իրենից: Այնքան ժամանակ, որ ծեսը կենդանի է, նրա բարեփոխությունը տեղի պիտի ունենա բնական ճանապարհով, ըստ ժողովորդների և երկրների ճաշակի ու խառնվածքի, ինչպես այդ եղել է անցյալում: Կարևոր այն է, որ յուրաքանչյուր եկեղեցի, որն ունի իր հատուկ ծեսը, կենդանի պահի այն իր ժամանակի պայմանների համաձայն, որպես իր հավատի ընդհանուր արտահայտությունը, իր հասարակաց աղոթքի հանդերձանքը, իր ժողովորդի քրիստոնեական քաղաքակրթությունը և, վերջապես, որպես խոստովանություն Քրիստոնի, իրքն հասարակություն: Որովհետև Քրիստոնի խոստովանելու անհատական մի արարք չէ այլևս, ինչպես այդ հալածանելու դարերում էր, երբ քրիստոնյան խոստովանում էր իր հավատը իր հալածի առաջ, այլ այնպիսի մի արարք, երբ քրիստոնյաների

ժողովը, այսինքն՝ եկեղեցին, հրապարակով խոսութանում է՝ Քրիստոսին:

Ծեսի այն տեսակը, որ դարեր ամրող ներշնչել է բոլոր եկեղեցիներին, հաստիակես Սրբների եկեղեցիներին, բյուզանդականն է: Այն եղել է նախատիպը, որի հիման վրա յուրաքանչյուր օրթոդոքս եկեղեցի վերստեղծել է իրենը, ըստ իր գեղարվեստական և ազգային ամենախոր ձգութանքների: Բայց բոլորն էլ պահել են Բանի առաջավորությունը, այն ներդաշնակությունը, որը վերշնականապես հաստատված է եղել մարդու և ամեն կյանքի հավիտենական օրենքների միջև: Բանի այս առաջավորությունից է, որ բխում է նրա հիմանալի պայմանությունը, նրա խորությունը խաղաղությունը: Այդտեղից է գալիս նաև այն, որ նա կարծես ամրողապես լուծված է աստվածային Ծըմարտության հայեցողության, պաշտամունքի և փառարանության մեջ: Այդտեղից է նրա ակներն անտարբերությունը մեր առօրյա կյանքի մասն թըմառությունների հանդեպ: Այդտեղից է նրա ոչ շահագրգոված լինելը բարոյական դաստիարակության ու կրթության անմիջական ամեն շանքով: Մեր եկեղեցիների ծեսի մեջ կա ինչ-որ բան, որ մտածել է տալիս աստերի, նրանց ընթացքի հավասարաչափ համիտենության, նրանց անփոփոխ կարգի, խորունկ լուրջան և անհուն հեռավորության մասին: Այսուհանդեռձ երևութան է միայն, որ ծեսը թվում է, թե շահագրգոված չէ մարդու բարոյական կյանքով, նրա շանքով և գործունեությամբ: Իրականում նա շատ լավ գիտի, թե ով որ ապրում է իր մեջ, տեր է ճշմարտության, գերբնական առողջության, ներքին խաղաղության, և թե նա, ով բաժանվում է իր սրբազն թագավորությունից՝ դիմագրավելու համար կյանքի փորձությունները, պիտի կարողանա այնուեղ ճառագայթել իր ուժը:

Ժամը 12-ին, փոքր ընդմիջումից հետո, գումարվեց խորհրդակցության Բ հիսոր, որ տեղի ունեցավ մտքերի աշխույժ և հետաքրքիր փոխանակություն տ. Շահե արքեսիսկոպոսի վերոնշյալ գեկուցման շորջ, որին մասնակցեցին պատգամավորներից շատերը:

Մայր Աթոռի վանական սեղանատանը տրված ճաշկերությից հետո, ժամը 17.30-ին, գումարվեց Գ հիսոր, որ հանդես եկավ Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ և Կալաքրիայի միտրոպոլիտ տ. Էմիլիանոս Տիմիադիսը՝ «Աստուծո խոսքի քարոզությունը պաշտամունքի միջոցով» թեմային նվիրված ընդարձակ գեկուցումով:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ նոյնական մտքերի փոխանակություն:

Ժամը 18.30-ին Աստվածաշնչի միացյալ ընկերության ներկայացուցիչ Դոլ Ֆուետերը ելույթ ունեցավ «Աստուծո խոսքի տարածման անհրաժեշտությունը և նրա միջոցները ժամանակակից մարդկության մեջ» նյութի շորջ:

Ն Ի Ս Դ

Սեպտեմբերի 18-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Մայր տաճարում դարձալ տեղի ունեցավ էկումենիկ աղոթք, որից հետո խորհրդակցությունը շարունակեց իր աշխատանքները:

Ժամը 10-ին Կիպրոսի օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչ Դիոնիսիոս Կիկոտիս սարկավագը հանդես եկավ «Ծիսական ոգեկանությունն այսօր» թեմային նվիրված հետաքրքիր գեկուցումով, որից հետո նոյնական տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

Ճաշից հետո, ժամը 16-ին, արոք. Բ. Բոբրինսկովը (Ֆրանսիա) հանդես եկավ «Ծիսական կյանքի ոգեկան հիմքը» թեմային նվիրված ընդարձակ գեկուցումով:

Այս կարևոր թեմայի շորջ ևս պատգամավորների միջև տեղի ունեցավ մտքերի աշխատ փոխանակություն:

Նույն օրը, ժամը 17.30-ին, խորհրդակցությունը շարունակվեց աշխատանքային երեք առանձին խմբերում:

Երեկոյան ժամը 20-ին պատվիրակությունը Մայր տաճարում ներկա եղավ Հակոմի արարողության: Մայր տաճարի երգախմբի արական խոմքը, խմբավար Խորեն Մելիքանիջյանի ղեկավարությամբ, խոր ապրումով կատարեց խաղաղականի ժամերգության շարականներն ու երգերը:

ՆԻՍ Ե ԵՎ Զ

Սեպտեմբերի 19—20 օրերին խորհրդակցության աշխատանքները շարունակվեցին աշխատանքային վերոհիշյալ երեք խմբերում:

Ժամը 17-ին կայացավ լիազումար հիսու, որի ընթացքում պատվիրակների կողմից քննության առնվեցին աշխատանքային երեք խմբերում քննարկված հարցերի այդ արդյունքները, ապա ամփոփեցին համապատասխան նախագծերի մեջ՝ ներկայացվելու համար նայորիում կայանալիք ԵՀԽ-ի առաջիկա հիմներորդ համագումարին:

Սեպտեմբերի 20-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, գումարվեց համաօրթոդոքս խորհրդակցության եզրափակիչ հիսու, ուր հանրագումարի բերվեցին խորհրդակցության աշխատանքների արդյունքները և պատրաստվեցին պաշտոնական փաստաթղթեր:

Ժամը 14-ին խորհրդակցությունը հաջողությամբ ավարտեց իր աշխատանքները: Բոլոր պատվիրակները, առ Շահն արքեպիսկոպոսի գլխավորությամբ, պաշտոնապես ներկայացան Հայոց Հայրապետին Վեհարանի ընդունելության դաჩիլինում Խորին Սրբությանը հաղորդելու համար խորհրդակցության բարեհաջող ավարտի մասին:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ ընդունեց Մայր Աթոռում գումարված ԵՀԽ-ի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի կողմից նախաձեռնված սույն խորհրդակցության բոլոր մասնակիցներին և իր ուրախությունը հայտնեց այս առթիվ՝ ասելով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ

(1975 թ. սեպտեմբերի 20)

Այս պահուն Մենք շատ գգացված ենք և Մեր ուրախությունը կուգենք հայտնել, որ այսքան պատկառելի ներկայացուցիչներ Արևելյան օրթոդոքս եկեղեցիների հաճեցան այցի գալ ու Էջմիածնին՝ այստեղ իրենց ժողովը գումարելու համար:

Մեզ համար պատմական հշանակություն ունեցող հաճելի մի փորձառություն եղավ և իսկապես այս հանդիպումը առավել եղբայրական սիրո մի ջերմություն ստեղծեց մեր եկեղեցիների միջև: Մեր խորը գոհունակությունն ենք հայտնում բոլորի՝ ձեր ներկայության համար, և ուզում ենք ցանկալ, որ Աստոծ կամքով նաև ուրիշ առիթներով այսպիսի հանդիպումներ, հավաքութներ տեղի ունենան ու Էջմիածնում: Մենք միշտ սիրով պիտի սպասենք ձեզ նաև ուրիշ առիթներով:

Թող Աստված օրինի ձեր գործը և ձեր առաքելության ճանապարհը:

Վաստահ ենք, որ այս փաստաթղթերը, որոնց մեջ խոացած են Արեվելյան եկեղեցիների մտածումները և սպասումները, տվյալ հարցերի կա-

պակցությամբ կարևոր վկայություններ պիտի լինեն Նայրոքի քննիանոր ասամբեայի աշխատանքների հանապարհի վրա:

Խոկապես մեր եկեղեցին ևս, Մենք էլ անձամբ, մասնավոր կարևորություն կը նծագենք ծխական արարողություններին՝ Քրիստոսի պատգամը կենդանի պահելու համար մեր հավատացյալ ժողովրդի մեջ:

Մենք էլ համաձայն պիտի լինենք շատերի հետ, որ մեր օրերում ծխական տեսակետից որոշ հարմարեցումներ, որոշ փոփոխություններ կամ կը ռատումներ պետք է կատարվեն, սակայն ոչ երբեք հիմնականը զոհելով: Եվ ձեր Գ թեման, մանավանդ այն, որ կվերաբերի ծեսերի միջոցով ոգեկանությունը պահպանելուն, Մեզ համար շատ կարևոր և խստ էական կթվի:

Ահավասիկ այս գնահատականներով Մենք կրկին կշնորհավորենք ձեր աշխատանքը և ձեզ կմաղթենք Նայրոքի մեջ լիակատար հաջողություն՝ ձեր մտածումների լիակատար իրականացման համար:

Ապա դոկտ. Էմիլիո Կաստրոն պաշտոնապես Հայոց Հայրապետին հանձնեց խորհրդակցությունում ընդունված բոլոր փաստաթղթերը և, հաճուն ԵՀԽ-ի, շնորհակալություն հայտնեց հայ եկեղեցու պետի կողմից ցույց տրված հյուրընկալության համար:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺԾՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Նոյն օրը, երեկոյան ժամը 18-ին, Մայր տաճարում, ի պատիվ խորհրդակցության մասնակիցների, տրվեց հոգևոր երաժշտության համերգ: Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ խմբավար Խորեն Մելիսանեցյանի գեղարվեստական դեկավարությամբ:

Համերգի ծրագրում կատարվեցին հայկական, ուսանական, հունական և արևմտանվորական հոգևոր երաժշտության դասական ընտիր նմուշներ:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մասուցեց Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով, որին մաս էին կազմում նաև համաօթողորս խորհրդակցության պատվիրակները, Մայր տաճարի գանգերի ղողաճի տակ, հանդիսավորապես առաջնորդվեց Մայր տաճար, որը լցվել էր հավատացյալ ժողովրդի հոծ քազմությամբ:

«Հայր-մեր»-ից առաջ Հայոց Հայրապետն առաջնորդվեց Ավագ խորան՝ քարոզելու և ողջումնի նր խոսքն ասելու Մայր Աթոռում գումարված խորհրդակցությանը մասնակցած հարգարժան պատվիրակներին.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՉՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՂԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ,

(1975 թ. սեպտեմբերի 21)

«Յանուն Հօր և Որդու և Հոգուն սրբոյ. ամէն»:

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնատրք ևս ևս հանգուցից զձեզ»:

Միրելի հավատացյալ ժողովուրդ,

Մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս իր քարոզության ընթացքում մի համբաւավոր առիթով իր շուրջը համախմբված բազմության այս խորերը ուղղեց՝ ասելով. «Եվկը ինձ մոտ բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, որովհետև և ձեզ պետք է հաճախտացնեմ»:

Կոչ է ամուս Հիսուս բոլոր մարդկանց, և բոլոր ժամանակներին՝ նույն հրավերը ողղեղով բոլոր նրանց, ովքեր հոգնած են և բեռնավորված իրենց կյանքի ճամփաներում:

Սիրելի ժողովորդ, Հիսուս՝ Որդին Աստուծո, եկավ աշխարհ երկու հազար տարիներ առաջ՝ իբրև լուսն օրինաց և՝ մարդարեից՝ բացելու համար ճանապարհը մարդկանց հոգիների փրկության: Սակայն միաժամանակ հաւ մարդկային երկրային կյանքի մեջ բերեց իր աստվածային հոգու խաղաղությունը և միսիթարությունը, որովհետև մարդիկ ծարավի էին այդ խաղաղության և այդ միսիթարության:

Ժամանակները փոխավորեցին դարերի հողովոյթով, Բեղաշրջվեցին կյանքի պայմանները և ձևերը, տեղի ունեցան հեղափոխություններ երբեմն ավելոծումներով, սակայն միշտ, բոլոր ժամանակներում աշխարհի վրա բոլոր ծագերում մարդիկ միշտ մնացին հոգնատանց, բեռնավորված, տարբեր և տարբեր տեսակի հոգնություններով, դժվարություններով, երբեմն տառապանքներով, երբեմն անարդարություններով, երբեմն վիշտերով և դժբախտություններով: Եվ ահավասի թե ինչքան միշտ և հավիտյան այժմեական է մնացել Հիսուսի հրավերը, որ բոլոր մարդիկ գան դեպի Որդին Աստուծո, որպեսզի գտնեն իրենց հոգու հանգիստը, խաղաղությունը, միսիթարությունը, փրկությունը:

Այսօր էլ այժմեական է գոյց ավելի քան երբեք Հիսուսի հրավերը՝ ուղղական մեզ բոլորին, աշխարհի բոլոր մարդկանց և մանավանդ բոլոր քրիստոնյաներին, բոլոր եկեղեցներին:

Եվ որպեսզի մենք քրիստոնյաներս և քրիստոնեական եկեղեցներս ավելի միասնությամբ և եղբայրությամբ պատասխաննենք Քրիստոսի հրավերին, վերջին տասնամյակներին հետզհետև ամրապնդվում է միությունը և եղբայրությունը քրիստոնյան եկեղեցիների միջև:

Դուք գիտեք հավանաբար հեռավոր անցյալի պատմությունից, թե միշտ այդպես չի եղել: Մարդկային տկարությունների հետևանքով, երբեմն էլ քրիստոնեական եկեղեցիներից անկախ քաղաքական պատճառներով՝ գրծություններ, անհամաձայնություններ և երբեմն էլ արյունալի պատերազմներ տեղի են ունեցել քրիստոնյաների միջև:

Այդ ժամանակները հեռավոր անցյալին են պատկանում: Մեր դարաշրջանում այդ կացությունները վերջնականապես հեռացել են մեզանից: Բոլոր քրիստոնյաները, բոլոր եկեղեցիները այժմ գիտակցում են, թե ամենքն էլ միևնույն Աստուծո զավակներն են, և բոլոր քրիստոնյաները կազմում են հոգևոր իմաստով մի անքածանելի ծողովորդ, Աստուծո ծողովորդ՝ անկախ իրենց տարբեր եկեղեցիների պատկանելիության: Եկեղեցիների միշտ զարգանում է միության և եղբայրության գիտակցությունը, և այդ ոչ միայն տեսական իմաստով, ոչ միայն գեցացական իմաստով, այլ նաև գործնական քայլերով, գործնական աշխատանքով:

Ահա այդպես է, որ մի քանի տասնամյակներէ ի վեր արդեն կյանքի է կոչվել համաշխարհային մակարդակով եկեղեցիների միության մի հզոր կազմակերպություն, որ կոչվում է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, որի կենտրոնը գտնվում է Զվիցերի մայրաքաղաք ֆնսում: Եվ այդ կազ-

մակերպության մասնակցում են գրեթե բոլոր եկեղեցիները: Ըիշու է, որ մի մեծ եկեղեցի՝ հոռմեական կաթոլիկ եկեղեցին, ողջակիորեն տակալին չի անդամակցում այդ կազմակերպությանը, սակայն հարաբերությունները չափազանց սիրալիք են և նույնիսկ կա իրական գործակցություն այդ կազմակերպության և կաթոլիկ եկեղեցու միջև, որով, կարծում ենք, մենք չենք սամալվի այսօր, եթե ասենք, թե բոլոր քրիստոնյա եկեղեցիները լուսավորված են, ոգեշնչված են միութեական ոգիով, այն, ինչ հունական հնավանդ բառով կոչվում է «Էկումենի»: Ուրեմն մեր օրերին բոլոր եկեղեցիները ներշնչված են ու առաջնորդված էկումենիկ ոգով, այսինքն քրիստոնեական եղբայրակցության, միության ոգով:

Դուք տեսնում եք, սիրելի հավատացյալներ, թե այսօր, մեր այս սուրբ տաճարի մեջ, Մեր կողքին գտնվում են բազմաթիվ բարձրաստիճան հոգևոր դեմքեր՝ եկած տարրեր երկրներից, ներկայացուցիչներ՝ տարրեր քրիստոնեական եկեղեցիների, որոնք բոլորն ել անդամակցում են ԵՀԽ-ին: Նրանք եկեղեցիների այստեղ ոչ միայն պարզապես այցելության, այլ էկումենիկ աշխատանքի: Վերջին 4—5 օրերի ընթացքում նրանք հատուկ ծրագրով գումարեցին ժողով ու զբաղվեցին կարևոր կրոնական-եկեղեցական հարցերով: Իրենց աշխատանքները վերջացրին երեկ, շաբաթ օրը, և այսօր Մենք հանդիսավորապես աղոթում ենք միասին, որպեսզի Աստված հաջողությամբ պատահի ԵՀԽ-ի բոլոր աշխատանքները և նրա սրբազն առաքելությունը հետզինեւ առավել արդյունավետությամբ հասաշ ընթամա և արդի աշխարհի պայմաններում կենդանի պահպանի Քրիստոսի Ավետարանը, Քրիստոսի պատգամը, որովհետև մենք՝ բոլոր մարդիկս, ճշմարտապես կարիք ունենք Քրիստոսի ներկայության մեր կյանքում, որպեսզի մենք զգանք մեզ ավելի միխթարված, ավելի զորացած, ավելի ազատ, ավելի լավատես ու ավելի հուսացյալ:

Հետզինեւ առավել լուսավորված գիտակցությամբ, թե Քրիստոս՝ Որդին Աստուծո, և ճշմարտապես նաև Փրկիչը մեր հոգիների:

Սիրելի հավատացյալներ, բարձրաստիճան հոգևոր դեմքերը, որ գտնվում են այստեղ, պատկանում են տարրեր քուր եկեղեցիների:

Սուաշին հերթին Մենք ոգում ենք հիշել հոյս օրթոդոքս եկեղեցին, որի գլխակոր ներկայացուցիչը՝ միտրոպոլիտ Էմիլիանոս, գտնվում է Մեր կողքին, և որ բոլորի անոնց ձեզ պետք է խոսի: Նա ներկայացուցիչն է Կ. Պոլս Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Դեմեորիոսի:

Այստեղ են նաև ներկայացուցիչները ուս պրավուլավ եկեղեցու, ուսին օրթոդոքս եկեղեցու, մալարար օրթոդոքս եկեղեցու, բուղար օրթոդոքս եկեղեցու, սերբ օրթոդոքս եկեղեցու, Լեհաստանի օրթոդոքս եկեղեցու, Վրաստանի օրթոդոքս եկեղեցու, Կիպրոսի և Ֆինլանդիայի օրթոդոքս եկեղեցիների, ինչպես նաև ներկայացուցիչները Ժնևի կենտրոնից, հարգարժան անձնավորություններ հոգևոր և աշխարհիկ, որոնք բոլորը մասնակցեցին այնքան ծրագանությամբ և իմաստությամբ այս ժողովի աշխատանքներին:

Այստեղ են նաև, անշուշտ, մեր՝ Հայաստանյաց ս. եկեղեցու ներկայացուցիչները Մայր Աթոռ ս. Էջմիածնից, Երուսաղեմի պատրիարքությունից, Մեծի Տաճան Կիլիկիի Աթոռից, Միացյալ Նահանգներից:

Ս. Էջմիածնում այս օրերին մի անգամ ևս խորհրդանշական այն եղբայրական գործակցությունը և միասնության ոգին, որ կա և զարգանում է: Մեր օրերին եկեղեցիների միջև էկումենիկ շարժման աստվածաբանը նաև ապարհուվ:

Մենք այս սրբազն առիթով մի անգամ ևս ողջունում ենք Մեր եղբայրներին ի Քրիստոս, մաղթում ենք նրանց աստվածային նորանոր ներշնչումներ, ուժ և եռանդ, որպեսզի ձեռք-ձեռքի տված հասուած տանեն քրիստոնեական առաքելությունը այս աշխարհի վրա:

Մաղթում ենք և ցանկանում ենք, որ իրենց վերադարձին տանեն Մեր եղբայրական ողջունը իրենց եկեղեցիների պետերին, Սրբազն Պատրիարքներին, կաթողիկոսներին և բոլոր Մեր եղբայրներին:

Թող Աստված օրինի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաքելությունը: Եվ թող Աստված միշտ զորավիճ և մարտակից կանգնի մեզ բոլորին, որպեսզի մենք բոլոր ուժերով աշխատենք մեր պարտքը կատարել առ Աստված և դեպի մեր հավատացյալ ժողովորդը այժմ և հավիտյան։ ամեն:

Այսուհետև, հանուն պատվիրակության, հետևյալ պատասխան խորով հանդես եկալ Կ. Պողի Տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ, Կալարիայի միտրոպոլիտ տ. Էմիլիանոս Տիմիադիսը.

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ Տ. ԷՄԻԼԻԱՆՈՍ ՏԻՄԻԱԴԻՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Սիրելի եղբայրներ և քույրեր:

Երկու հազար տարի առաջ Արենք կատարած իր առաջին այցելության ընթացքում Պողոս առաքյալ հանդիպեց իր ժամանակի բարձր մտավորականության ներկայացուցիչների՝ իմաստակերների, գիտնականների և մեծ գործների հետ, որոնք հավաքվել էին այնտեղ աշխարհի չորս ծագերից:

Գործք առաքելոց-և աստմ է, որ այնտեղ հավաքված գիտության մարդիկ, բոլորն էլ միևնույն ժամանակ աստվածավախ և աղոթքը սիրող մարդիկ էին, որովհետո աղոթքը նրանց կյանքի անբաժան մեկ մասն էր:

Արագես է նաև պարագան այսօր քրիստոնյա համայնքների մեջ, որ արարությունը գտնվում է եկեղեցու պաշտամունքի կենտրոնում:

Բայց ինչո՞ւ է արարությունը և աղոթքը այդքան անհրաժեշտ մեր կյանքի մեջ: Որովհետև առանց աղոթքի մարդն իրեն զգում է առանձին, լքված, անպաշտպան և աննպատակ: Որովհետև առանց աղոթքի մարդը չի կարող բացատրել, թե ինչու է եկեղ այս աշխարհ, ինչ է այս կյանքի նպատակը և ի՞նչ է սպասում իրեն մահից հետո:

Սրբազն արարությունն է, որ պատասխանում է այս երեք հարցերին:

Սարդը, որ աղոթքի միջոցով հարաբերության մեջ է Աստոծո հետ, առանձին չի զգում իրեն այսև:

Մենք ապրում ենք իրարամերժ հասարակությունների մեջ, որովհետև նրանք մարդուն հեռացնում են Աստծոց:

Եվ երբ մարդը հեռանում է Աստծոց, հեռանում է նաև ինքն իրենից:

Այս է ողբերգությունը մեր օրերի:

Մենք ապրում ենք հուսահատության մեջ՝ գտնվող ընկերության ծոցում, որ մարդը չի գիտակցում, թե որտեղից է գալիս և որ է գնում: Չենք կարող մի բացատրություն գտնել մարդու մասին՝ առանց վերադառնալու Աստծուն:

Մենք երջանիկ ենք, որ Մեր այս խոսքերն ուղղում ենք Հայաստանյաց առաքելական եկեղեցու զավակներին:

Դուք բացառիկ մի հարստություն ունեք ձեր պաշտամունքային կյանքի մեջ. բայց մի՛ մոռանաք, որ եկեղեցին հիմնված է նահատակների արյան վրա, մեր նախնիքների ուկորների և մեր պատմական առանցքի վրա:

Մի՛ մոռացեք, որ եթե ուզում եք պահել եկեղեցին, պետք է ձեր մեջ կենդանի մնա զոհողության ոգին, վկայության ոգին և իրական քրիստոնեական կյանքի ոգին:

Մեր եկեղեցու հայրերն ասում են, թե ինչպես որ ձուկը չի կարող ապրել ծովից դուրս, այնպես էլ մարդը չի կարող ապրել առանց կրոնական զգացմունքի և աղոթքի:

Սուրբ Հովհաննես Ուկերերանն իր քարոզներից մեկում ասում է, որ Սատված պետք ունի մարդուն՝ իր Ավետարանը, իր խոսքերը տարածելու համար: Այդ հշանակում է, որ մեզնից յուրաքանչյուրը պետք է զինվորագրի Ավետարանի քարոզության գործին՝ մանավանդ իր շրջանակի մեջ:

Այստեղ գտնվող եկեղեցական բոլոր ներկայացուցիչների կողմից հայտնում ենք Ձերդ Արքությանը մեր ողջունը:

Ամուր կանգնեք ձեր հավատքի վրա:

Թող Սատված օրինի ձեզ, հայ եկեղեցին, ձեր համայնքը և, մանավանդ, անսասան պահի Հայաստանյաց եկեղեցին իր պետով՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսով:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ժամը 14.30-ին, ի պատիվ խորհրդակցության մասնակից պատգամավորության, տրվեց ողջերթի ընդունելություն՝ Հայոց Հայրապետի կողմից:

Ընդունելությանը ներկա էին պատվիրակության հայ և օստար բոլոր անդամները, ներքին թեմերի թեմակալ առաջնորդները և այլ հրավիրյալներ, որոնց թվում տեր և տիկ. պրոֆ. Բարունակ Թովմանյանը ու տեր և տիկ. Գևորգ Տանձիկյանը՝ Բեցրություն:

Ընդունելությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սույնություն և ներկեցու գործերի խորհրդի նախագահ Սարգսի Գասպարյանը:

Ծաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետը մի անգամ ևս ողջունեց ներկայությունը Մայր Աթոռում գումարված համաօրթոդոքս խորհրդակցության մասնակիցների, օրինեց նրանց աստվածահաճ գործունելությունը, նորանոր հաջողություն ցանկացավ Եջիս-ի առաքելությանը և այս տարի նոյեմբերին նայրորդում գումարվելիք 5-րդ համագումարի աշխատանքներին:

Ընդունելության ժամանակ շերմ եղութեառով հանդես եկան տ. Էմիլիանոս Տիմիադիս միտրոպոլիտը և Հեղափնիի Զոն միտրոպոլիտը, տ. Անոնցի և տ. Գևարգեզէ Մար Օսթաթիոս եպիսկոպոսները, ավագ քահանա տ. Վիտալի Բորովյու, պրոֆ. Բորիս Բորինակովյու, դրցենտ տ. Պավել Ալեք ավագ քահանան, տ. Միմոն Ռոմանչով վարդապետը, պրոֆ. Էմիլիան Չարինչը, դոկտ. Գիրման Վոլդեկիրկոսը և ուրիշներ:

Հայ եկեղեցու անոնցից եղույթներ ունեցան նաև տ. Շահն արքեպիսկոպոս Աճեմյանը և տ. Արամ վրդ. Քեշիշյանը:

Ծաշկերույթի ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների սույնություն և ներկեցու գործերի խորհրդի նախագահ պրոֆ. Սարգսի Գասպարյանը ողջունեց պատվիրակություններին, որոնք աշխատում են նաև ժողովրդների մերձեցման, փոխըմբռնման և աշխարհի խաղաղության համար:

Ողջերթի սույն ընդունելությունն ավարտվեց եղբայրական շերմ սիրո մթնոլորտում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Սեպտեմբերի 21-ին, կիրակի օրը, ժամը 17-ին, պատգամավորությունը հանդիսավորական այցելեց Ծիծեռնակաբերդում հայ նահատակաց հուշարձան և ծաղկելու դրեց: Ապա պատվիրակության անդամները առանձին՝ առանձին խմբերով իրենց մայրենի լեզվով հոգեհանգաւոյշն մասնավոր կարգ կատարեցին հայ բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար:

Երեկոյան ժամը 19.30-ին պատվիրակությունը Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա եղավ Արմեն Տիգրանի անունու «Անուշ» օպերայի ներկայացմանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԿՆՈՒՄ

Սեպտեմբերի 22-ին և 23-ին, երեքշաբթի և երեքշաբթի օրերին, պատվիրակության անդամները այցելեցին Մայր տաճարի թանգարան, Վաղարշապատի պատմական վանքերը, եղան Գառնիում, և Գեղարդ վանքում, այցելեցին Երեքունի թանգարան և պետական պատվերասրահ, եղան Բյուրականի հայրապետական ամառանոցում և մայրաքաղաքի այլ տեսարժան վայրերում:

Սեպտեմբերի 23-ին, երեքշաբթի օրը, պատվիրակության բոլոր անդամները հրաժեշտ տվեցին Մայր Աթոռին լավագույն և անմոռանալի տպավորություններով:

Սուրբ Էջմիածնում համաօրթոդոքս սույն խորհրդակցության գումարման առթիվ Մայր Աթոռի դիմանի կողմից հազ մամուլին տրվեց հետևյալ հաղորդագրությունը.

ՊԱՐԳԵՎ, ԾԱՀԲԱՋՅԱՆ

Հ Ա Դ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Եկեղեցների համաշխարհային խորհրդի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» համաձայնությունի նախաձեռնությամբ և նորին Սրբություն S. S. Վագգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով սույն թվականի սեպտեմբերի 16—21-ը Մայր Աթոռ և Էջմիածնում գումարվեց համաօրթոդոքս խորհրդակցություն:

Խորհրդակցությանը մասնակցում էին Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքության, Ռուսաստանի, Վրաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սերբիայի, Շեխուլդիվակիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի, Կիպրոսի, Հնդկաստանի, Հունաստանի, Եթովպիայի և ԱՄՆ-ի օրթոդոքս եկեղեցների ներկայացուցիչները:

Ժողովին մասնակցում էր նաև Հայաստանյաց առաքելական եկեղեցու պատվիրակությունը:

Համաօրթոդոքս սույն խորհրդակցությանը մասնակցում էին 33 ներկայացուցիչներ, այդ թվում նաև Եկեղեցների համաշխարհային խորհրդի Ժնևի կենտրոնի դեկանալ անձնակազմի անդամներ և խորհրդականներ:

Խորհրդակցության գլխավոր թեման էր՝ «Խոստովանել Քրիստոսի այսօր եկեղեցու ծիսական կյանքի միջոցով»:

Սեպտեմբերի 17-ին, չորեքշաբթի օրը, առավույն ժամը 9.30-ին,